

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/3

25 օգոստոսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Նաիրա Ավագյանի 31.07.2015 թ-ի դիմում-բողոքը Ա/Ձ Աշոտ Հունանյանի նկատմամբ կազմված ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 30.07.2015 թ-ի թիվ 6107545 ակտի դեմ:

Նաիրա Ավագյանի բողոքում բերված փաստարկները.

Բողոքաբերը նշում է, որ ունի երեք անչափահաս երեխա: Ամուսինը՝ Ա/Ձ Աշոտ Հունանյանը, տառապում է ողնաշարի բարդ ճղվածքով և ունի սրտի հետ կապված խնդիրներ: Նա ամսվա 15 օրն աշխատում է «Կոնեկտ» գործարանում, իսկ մյուս 15 օրը 16 մ.ք. մակերեսով ավտոտնակում կատարում է մանրածախ առևտուր:

Հուլիսի 24-ին Կոտայքի մարզի տեսուչներն այցելել են ամուսնուն և խախտելով օրենքը համոզելով (իբր մեկ պարկ ցեմենտ է վաճառել առանց կտրոնի) փորձել են ՀԴՄ-ի խախտում արձանագրել:

Բողոքաբերն այցելել է հարկային տեսչություն Ա.Գալստյանին և ներկայացրել ամուսնու վատառողջ լինելը, ինչպես նաև հայտնել է ֆինանսական ծանր վիճակում գտնվելու մասին: Ա.Գալստյանը խոստացել է օգնել, սակայն այդպես էլ չի օգնել:

Բողոքաբերը խնդրում է հարցին տալ լուծում:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի 16.07.2015 թ-ի թիվ 6107545 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Աշոտ Հունանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 30.07.2015 թ-ի թիվ 6107545 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Խաչատուր Թորոսյանը 21.07.2015 թ-ին ժամը 16:00-ին Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ, 3-րդ փողոց հասցեում գտնվող խանութից կատարել է գնում 5600 դրամի չափով, գնվել է 2 պարկ ցեմենտ (1 պարկը 2800 դրամ), որի դիմաց կանխիկ վճարված գումարը վաճառող-գանձապահ Աշոտ Հունանյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգման իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետև, ժամը 16:06-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Չմուտքագրված գումարը մուտքագրվել է ՀԴՄ և ժամը 16:07-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 5600 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի

կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 379-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 30.07.2015 թ-ի թիվ 6107545 ակտի կազմման պայմաններում Ա/Ձ Աշոտ Հունանյանի համար առկա են ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ, հետևապես ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի 1-ին կետով խախտումն արձանագրվել է վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից չհիմնավորվեց 21.07.2015 թ-ին ժամը 16:00-ին Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ, 3-րդ փողոց հասցեում գտնվող խանութից 5600 դրամի գնում կատարվելու (2 պարկ ցեմենտ) և դրա դիմաց Ա/Ձ Աշոտ Հունանյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրվելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 30.07.2015 թ-ի թիվ 6107545 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

